

վացիայի ենթարկելու պատրաստակամություն հայտնող և գյուղատնտեսական օգտագործման նպատակներով ձեռք բերող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Շուկայական տնտեսության պայմաններում, մրցակցային բարենպաստ միջավայրի ձևավորման դեպքում, գյուղատնտեսության ոլորտում տնտեսությունների խոշորացումն օբյեկտիվ և այլընտրանք չունեցող գործընթաց է, քանի որ տվյալ գոտում, ելնելով գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից և գոտիական մասնագիտացումից, օպտիմալ չափերով տնտեսությունների ձևավորմամբ հնարավորություն է ընձեռնվում ծախսերի կրճատման արդյունքում ստանալ ավելի բարձր բերք մեկ միավոր հողատարածությունից, կրճատել միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսումները, բարձրացնել մեքենայացված աշխատանքների տեսակարար կշիռը (մասշտաբի էֆեկտ), հետևաբար՝ բարձրացնել արտադրողականությունը և արտադրանքի մրցունակությունը: Սակայն, այդ գործընթացների խթանման և խրախուսման համար պահանջվելու է պետական աջակցության աստիճանական ընդլայնումը վերը նշված հիմնական ուղղություններով, ինչպես նաև վերջիններիս շարունակական հստակեցումը և կատարելագործումը, ելնելով առկա ռիսկերի գնահատման ու վերլուծության արդյունքներից:

ԵՎԳԵՆՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքի 75 տոկոսը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մետր բարձրության վրա: Հայաստանի 60 տոկոսի համար տարեկան տեղումները կազմում են մինչև 600 մմ, իսկ 20 տոկոսի համար՝ 400 մմ: Հայաստանի Հանրապետության տարածքում շուրջ 9480 փոքր և մեծ գետ է գտնվում, որոնցից 379-ը ունի 10 կմ և ավելի երկարություն: Գետերի ցանցի ընդհանուր երկարությունը 23 000 կմ է: Երկրի տարածքի 76%-ը պատկանում է Արաքս գետի ավազանին: Գետի պետական սահմանն է Իրանի հետ և Թուրքիայի հետ սահմանի մեծ մասը: Երկրի հյուսիսարևելյան մասը պատկանում է Քուռ գետի ավազանին: Տեղումների ընդհանուր ծավալի (15 000-18 000 մլն խոր. մ) 2/3-ը գոլորշանում է, և միայն 1/3-ն է առաջացնում վերգետնյա կամ ստորգետնյա հոսք, որն ունենում է անհամաչափ բաշխում¹: Գետերը հիմնականում ունեն ոչ հավասարաչափ սնուցում:

Գետերի վրա կառուցված է 75 ջրամբար՝ 986.0 միլիոն խոր. մետր ծավալով: Հանրապետության հիդրոէներգետիկ պաշարները գնահատվում են 1 700 000 կՎտ-ի, որոնցից այսօր օգտագործվում է միայն 40 %-ը:

Հայաստանի տարածքում գտնվում են շուրջ 100 մանր լճեր՝ մոտ 300 միլիոն խոր. մետր ընդհանուր ծավալով: Այստեղ է նաև Կովկասի ամենամեծ բարձրալեռ լիճը՝ Սևանը, որի մակերեսը կազմում է 1240 քառ. կմ (մինչև իջեցումն այն կազմել է 1360 քառ. կմ), խորությունը՝ շուրջ 99 մ: Լիճն են թափվում 28 գետ, արտահոսում՝ միայն Հրազդանը: Երկիրը հարուստ է նաև ստորգետնյա ջրերով:

Հայաստանի մի քանի գետերի հիդրոգրաֆիկական և հիդրոլոգիական բնութագրերը ներկայացված են 1-ին աղյուսակում:

Տարեկան առաջանում է մոտ 3 մլրդ խոր. մետր ստորգետնյա ջուր: Ստորերկրյա ջրերի ոչ համաչափ տեղաբաշխման պատճառով Արարատյան դաշտում արտեզյան ջրերի ճնշումից ճահիճներ են առաջանում, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 1500 քառ. կմ է: Ստորգետնյա ջրերն օգտագործվում են ջրամատակարարման և ոռոգման նպատակով: Խմելու ջրի 96%-ը և ստորգետնյա ծագում ունի²:

¹ http://ostarmenia.com/?page_id=4729&lang=hy#gold

² http://ostarmenia.com/?page_id=4729&lang=hy#gold

Հանրապետության մի քանի խոշոր լճերի ծավալների և ջրի հայելու մակերեսի վերաբերյալ տվյալները ներկայացվում են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 1

Հայաստանի մի քանի գետերի հիդրոգրաֆիկական և հիդրոլոգիական բնութագրերն ըստ գետերի վերջին (սահմանափակող) հատվածների¹

Գետերի անվանումը	Որտեղ է թափվում	Երկարությունը, կմ	Ջրհավաք մակերեսը, քառ. կմ	Ընդհ. անկումը, մ	Միջին տարեկան հոսքը խոր.մ/վրկ	Հոսքի մոդուլը լ/վրկ. 1 քառ. կմ-ից
Փամբակ	Դեբեդ	86	1380	940	7.97	7.97
Դեբեդ	Խոռամ	176	4050*	565	8.84	8.84
Աղստև	Կուր	133	1610*	2770	6.83	6.83
Ախուրյան	Արաքս	186	3602*	1070	9.08	9.08
Հրազդան	Արաքս	141	2310	1090	9.70	9.70
Որոտան	Արաքս	178	2180*	2775	10.0	10.0
Մասրիկ	Սևանա լ.	43	753	970	5.38	5.38
Ազատ	Արաքս	56	547	2285	11.1	11.1
Արփա	Արաքս	128	2175*	2670	10.1	10.1
Արաքս	Կուր	1050	101900	3295	-	-

* Տվյալները սահմանափակվում են Հայաստանի սահմաններում ընդգրկվածության մասով:

Աղյուսակ 2

Հանրապետության մի քանի խոշոր լճերի ծավալները և ջրի հայելու մակերեսը²

Լճերի անվանումները	Մակարդակի միջը, մ	Ծավալը	Հայելու մակերեսը քառ. կմ
Սևանա	1897(1916 [*])	33.8(58.5 [*]) խոր. կմ	1244 (1416 [*])
Արփի	1480	50.0 մլն. խոր. մ	4.5
Սև	2708	9.0 մլն. խոր. մ	2.0
Այդր	853	310 հազ. խոր. մ	0.07
Քարի	3190	357 հազ. խոր. մ	0.12
Կապուտան	3299	1.5 մլն խոր. մ	0.1
Ակնա	3038	2.5 մլն խոր. մ	0.8

* Ցուցանիշները վերաբերում են մինչև լճի մակարդակի իջեցման գործընթացի սկսելը:

Հայաստանի բնակչության շուրջ 36 տոկոսը ապրում են գյուղական համայնքներում, որտեղ եկամտի զգալի մասը ձևավորվում է գյուղատնտեսության ոլորտում, որի մեծ մասը ոռոգելի երկրագործությունն է: Հայաստանում հիմնական ջրօգտագործողն է հանդիսանում գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսական ՀՆԱ-ի տեսակարար կշիռը վերջին 3 տարիների տվյալներով կազմում է ավելի քան 17 տոկոս, Հայաստանի բուսաբուծական արտադրանքի 80 տոկոսը ստեղծվում է ոռոգելի տարածքներում:

Հայաստանում հիմնական ջուր սպառող ոլորտները գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են, քաղաքային ջրամատակարարումը, էներգետիկան, ձկնային տնտեսությունը և այլն: Հայաստանում գյուղատնտեսությունը հանդիսանում է հիմնական ջրօգտագործողը: Ոռոգելի հողատարածքների ընդհանուր մակերեսը 1987 թվականից մինչև 1998 թվականը 340000 հա-ից կրճատվել է մինչև 274000 հա և կայունացել է այդ մակարդակի վրա: Շուկայական հարաբերությունների անցման ժամանակահատվածում գյուղատնտեսության կողմից օգտագործվող ջրի ծավալը կրճատվել է մոտավորապես կիսով չափ. 1988 թվականին 2.7 մլրդ մ³-ից 2000 թվականին հասնելով մինչև 1.37 մլրդ մ³: Նման կրճատումը հիմնականում պայմանավորված է էներգատար հիդրոպոմպային կայանների ոչ արդյունավետ շահագործմամբ: Վերջին տարիներին ինժեներական սարքավորումների վերակառուցման և կատարելագործման ճանապարհով ոռոգման ինքնահոս համակարգին անցման նպատակով տարվում են ակտիվ աշխատանքներ, ինչպես նաև ջրային համակարգերի ՕԳԳ բարձրացման ուղղությամբ, որն էլ համապատասխանաբար հնարավորություն կտա ավելացնել

¹ Աշոտ Մարկոսյան, Գևորգ Նազարյան, Ջրային ռեսուրսների կառավարումը, Երևան, 2003, էջ 654:

² Նույն տեղում, էջ 660:

ռոռգելի հողատարածքների մակերեսը: Քաղաքային ջրամատակարարումը համարվում է երկրորդ հիմնական ջրօգտագործողը: Խմելու ջրի պահանջների բավարարման համար Հայաստանում բնակչությունը հիմնականում օգտվում է բարձրորակ ստորգետնյա ջրային ռեսուրսներից: Ջրի օգտագործման ընդհանուր քանակի միայն 5 տոկոսն են կազմում մակերեսային ջրերը, որոնք ենթարկվում են համապատասխան մաքրման: Հենց քաղաքային ջրամատակարարման համակարգերը հիմնականում տեխնիկական վիճակի պատճառով հայտնվեցին ֆինանսական կախվածության մեջ: Շատ տարիներ առանց ընթացիկ վերանորոգման աշխատանքների և զգալի ներդրումների շահագործումը հանգեցրեցին ջրային մագիստրալների և ինժեներական սարքավորումների մաշվածության: Դրա հետ կապված ավելացել է վթարների քանակը, և, համապատասխանաբար, զգալիորեն բարձրացել է արտահոսքերի մակարդակը: Քաղաքային ջրամատակարարման համակարգի սպասարկմամբ զբաղվում են «Եվրոդոնկանալ» ՓԲԸ-ն, որը սպասարկում է մայրաքաղաքի և մոտակա գյուղերի ավելի քան 1 մլն բնակչություն և «Արմվոդոկանալ» ՓԲԸ-ն, որը սպասարկում է հանրապետության 43 քաղաքների և 290 գյուղերի մոտավորապես 1.4 մլն բնակիչներին: Հանրապետության 600 հազար բնակչությամբ ավելի քան 600 բնակավայրեր, տարածքներ (այդ թվում նաև քաղաքներ) սպասարկվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: «Նոր ակունք» կազմակերպությունը սպասարկում է Արմավիրի մարզի 100 հազարանոց բնակչությամբ 12 քաղաքներ և գյուղեր:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները ունեն ջրամատակարարման սեփական համակարգերը: Դրանք ջուրը վերցնում են ինչպես մակերեսային ջրային օբյեկտներից, այնպես էլ ստորգետնյա աղբյուրներից: Վերջին 10 տարիների ընթացքում արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ջրօգտագործումը արդյունաբերության ծավալների կրճատման և դրանցից շատերի գործունեության կասեցման պատճառով զգալիորեն կրճատվել է (220-ից հասնելով մինչև 50 մլն մ³): Ձեռնարկությունների հիմնական մասը տեղակայված է Երևանի սահմաններում, դրանք կազմում են Հայաստանի ընդհանուր ջրօգտագործող արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակի 40 տոկոսը:

Ջրի խոշորագույն օգտագործող է հանդիսանում ատոմակայանը: Չնայած այն հանգամանքին, որ ջրի արդյունաբերական սպառումը ընդհանուր ջրօգտագործման համեմատ կազմում է չնչին տոկոս, այդուհանդերձ տվյալ ճյուղի հիմնական խնդիրն է արդյունաբերական կեղտաջրերի մաքրումը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ աղտոտող նյութեր: Արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը առանց նախօրոք մաքրման արտանետում են իրենց թափոն ջրերը քաղաքային կոլեկտորներ, կամ էլ հեղուկ արտանետումները խառնում են գետերին և ջրամբարներին:

Հայաստանում հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր հզորությունը կազմում է 1.020 ՄՎտ, իսկ արտադրվում է մոտավորապես 800 ՄՎտ: Գոյություն ունեցող 35 հիդրոէլեկտրակայաններից 9-ը համարվում են երկու հիմնական հիդրոէներգետիկայի կասկադներ՝ Որոտանի և Հրազդանի բաղկացուցիչ մասը, որոնք իրենց հերթին երկրի հիդրոէներգիայի ընդհանուր հզորության մեջ կազմում են 92 տոկոս և արտադրում են ամբողջ էլեկտրաէներգիայի 23 տոկոսը:

Էներգետիկայի ոլորտի ընթացիկ բարեփոխումներից մեկն է հանդիսանում մասնավոր հիդրոէլեկտրակայանների շահագործման և կառավարման գործընթացին օպերատորի միացումը:

Գարնանային ջրհեղեղները հիմնականում վնասում են մասնավոր կառույցների ենթակառուցվածքները և գետերի մոտ ապրող բնակչության անձնական սեփականությունը: Քուռ գետի ավազանում ջրհեղեղների հիմնական պատճառն են անձրևները, իսկ Արաքս գետի ավազանում՝ ձյան հալքը:

Հայաստանում կառուցված ռոռգման ջրամբարները հիմնականում հաշվարկված չեն եղել ջրհեղեղներից պաշտպանվելու համար: Այդուհանդերձ դրանցից մեծ մասը ավերիչ ջրհեղեղների ազդեցությունից պաշտպանվելու տեխնիկական հնարավորություն ունի:

Հայաստանի ջրային հատվածի խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրներ և ջրամատակարարման և ջրահեռացման քաղաքային ենթակառուցվածքների կառավարման հետ կապված

խնդիրներ: Առաջին խմբին են դասվում ջրի ցածր որակի հետ կապված խնդիրները, արդյունաբերական աղտոտվածությունը և գյուղատնտեսական արտանետումները (ռեկրեացիոն գոտիների (ՄԼանա լիճ) ձևավորման ժամանակ էկոհամակարգերի պահպանության անտեսումը, այս խմբին են դասվում նաև ջրհեղեղների հետ կապված խնդիրները, հողերի էրոզիան, ջրի բաշխման հետ կապված ջրօգտագործողների միջև եղած հակասությունները: Երկրորդ խմբին են դասվում պահանջարկի անարդյունավետ կարգավորման հետևանքով ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը, ենթակառուցվածքների վիճակի վատացումը և մեծ կորուստները:

Ոռոգման ջրամատակարարման կառավարումն իրականացնում է ջրային համակարգերի կառավարման մարմինը կամ ջրօգտագործողների ընկերությունը (ջրօգտագործողների ընկերությունների միությունը)՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի համար ջրային ռեսուրսների միասնական կառավարման միտքը հարաբերականորեն նոր է, սակայն արդեն դրա սկզբունքների ներդրման ուղղությամբ քայլեր են ձեռնարկված: Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ 1992-2000թթ. մշակվել և հաստատվել էր «ՀՀ ջրային ռեսուրսների և ջրային տնտեսության կառավարման բարելավման հայեցակարգը», որն իր հերթին 2002 թվականին ջրային օրենսգրքի ստեղծման համար հիմնային փաստաթուղթ դարձավ: Դրանում տեղ էին գտել նաև ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մոտեցումները:

«Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ջրային ռեսուրսներ ինտեգրված կառավարման մոտեցումները» ամփոփ գեկուցման մեջ հիշատակվում է, որ Ջրային օրենսգիրքը (ՋՕ) մասնավոր օպերատորներին հնարավորություն է տալիս կառավարել պետական ջրային տեղամասերը: Այս պահի դրությամբ մշակված էր ավելի քան 30 ենթաօրենսդրական ակտ և նորմատիվ իրավական փաստաթղթեր, որոնք ուղղված են ՋՕ-ի կիրարկմանը: Ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման սկզբունքների իրականացման համար Հայաստանում միջազգային կազմակերպությունների ֆինանսական և փորձագիտական աջակցության պարագայում իրականացվել են և գործողության փուլում են գտնվում նախագծեր, որոնք ուղղված են օրենսդրական դաշտի և մոնիթորինգի համակարգի բարելավմանը, գետավազանային կառավարման մեջ ներդրումների իրականացման աջակցությանը: Ծրագրի նպատակն է ներդնել գետավազանների ինտեգրված պլանավորման մոդելը և տեղական մակարդակում ստեղծել համապատասխան հնարավորություններ: Ծրագիրը համագործակցում է «Հայիդրոմետ»-ի ծառայության հետ (ծրագրի շրջանակներում վերանորոգվել և անհարժեշտ սարքավորումներով վերազինվել են Դեբետ գետի վրա հետազոտական կայանները):

Նաև ստեղծվել է գետավազանային կառավարման Հյուսիսային Մարմինը, կատարվել են բնակչության տեղեկացվածության բարձրացման և որոշումների ընդունման գործընթացում նրա մասնակցության հետ կապված աշխատանքները: Ջրի ինտեգրված կառավարման սկզբունքների առավել արդյունավետ ներդրման համար պետք է այդ ուղղությամբ մասնագետների պատրաստում, որոնք ինչպես մասնագետների, այնպես էլ շահագրգիռ հասարակության համար կանցկացնեն վերապատրաստում¹: Հայաստանում այդ գործընթացի ներդրման համար կան հիմքեր, սակայն առանց դրսից օգնության ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ներդրման գործընթացը դանդաղ և անարդյունք կընթանա, քանի որ այն պահանջում է բավականին շատ ժամանակ և ֆինանսներ:

Ջրային ռեսուրսների կառավարումն ապահովում է հետևյալ սկզբունքների իրականացումը².

1. ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գիտական հիմնավորվածությունը.
2. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով սահմանված գնագոյացման կարգավորման, խթանման և այլ չափանիշների կիրառումը.
3. ռիսկերի կարգավորման կիրառման ապահովումը.

¹ ԱՊՀ երկրների անկախ մամուլի տեսություն, 2010, № 6, էջ 12-21:

² Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթներ, 03.05.2005թ.:

4. բնապահպանական, մշակութային, սոցիալական և տնտեսական արժեքների համալիր գնահատմամբ ջրային ռեսուրսների կառավարման իրականացումը.
5. ջրային ռեսուրսների ազատ հոսքի կուտակումը և տեղափոխումը արհեստական ջրամբարների ու պատվարների կառուցմամբ.
6. Հայաստանի Հանրապետության բնակավայրերում իրավական ակտերով սահմանված նորմերին և ստանդարտներին համապատասխանող որակով հետզհետե շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը.
7. ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի թափանցիկ և մասնակցային կառավարումը, ինչպես նաև գենդերային քաղաքականության սկզբունքների իրականացումը.
8. ջրավազանային կառավարման մակարդակով ջրային ռեսուրսների ջրառատության, ինչպես նաև ջրային ռեսուրսների սպառողական և ոչ սպառողական արժեքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխման, վերաբաշխման և գնագոյացման ապահովումը.
9. անդրսահմանային ջրային ռեսուրսների և ջրահոսքերի կառավարումը:

ԵՎԳԵՆՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՈՌՈԳՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոռոգման ոլորտում առկա հիմնախնդիրների բարեհաջող լուծումը որոշակիորեն պայմանավորված է ճիշտ և նպատակասլաց սուբսիդավորման քաղաքականության հետևողականորեն իրականացմամբ: Ըստ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 81-րդ հոդվածի՝ ջրային հարաբերություններում կարող է տրամադրվել ֆինանսական օգնություն՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների տրամադրման տեսքով՝ կախված ջրի ազգային ծրագրում ամրագրված ֆինանսական օգնության տրամադրման կոնկրետ ձևից: Ընդ որում, կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծով ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը պետք է ներկայացնի ջրամատակարարներին և ջրօգտագործողներին պետական բյուջեից տրվող սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների չափերը: Միաժամանակ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունները պետք է սահմանվեն այնպես, որ նպաստեն ջրային համակարգերի պահպանման և տեխնիկական սպասարկման ծախսերի հատուցմանը:

Նշված օրենսգրքով սահմանված սուբսիդիաները ջրամատակարարներին կամ ջրօգտագործողներին կարող են տրամադրվել ուղղակի վճարումների տեսքով:

ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին 2011թ. տրամադրվել է 5.343 մլրդ դրամ, իսկ 2012թ. նախատեսված է հատկացնել 6.856 մլրդ դրամ, որից գյուղատնտեսական ծրագրերի ֆինանսավորման համար՝ 4.407 մլրդ դրամ: Վերջինս ներառում է պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին ծրագիրը 625 մլն դրամ և գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը 578 մլն դրամ գումարով: Ջրային տնտեսության համակարգին բյուջեի նախագծով հատկացումները կազմում են 7 մլրդ 143 մլն դրամ՝ առանց վարկային ծրագրերի միջոցների: Այս ոլորտում դիտվում է ծախսերի կրճատում քանի որ ավարտվել են խոշորածավայ՝ «Հագարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում իրականացվող նախագծերը: Նշված գումարից «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով կհատկացվի 3 մլրդ 9 մլն դրամ, «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում ծրագրով»՝ 1 մլրդ դրամ և նույնքան էլ «Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծրագրով: Միջոցներ են նախատեսվել նաև կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և նորոգման նպատակով: Համակարգում նախատեսվում է